

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵՒ) ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԻՈՒՐԱՆՑԻ

ՃՇ.

Անդ էր տեսանել զաղէտուն, զանամոցն ըգծայն բառաչման, բազումք չոպան առ տապանն, եւ չեղեւ զինչ որ կամեցան:

ՃՇ.

Լային հարք եւ մայրք որդովք, եւ լալովն ինչ ոչ շահեցան, բառասուն տիւ եւ գիշեր ամենայն հասակ ջընջեցան:

ՃՇ.

Ոչ սովորական անձրիւ, այլ յերկնից հեղեղ հոսեցան, հեղեղն է ի գործ մեղաց, հեղեղին ջըրով սուզեցան:

ՃՇ.

Ցիշեաց Տէր Աստուած ըզնոյ գրթութեամք եւ զիւրսն ամենայն, որ ոչ մոռանայ երբեք, ըգծառայս իւր ազնըւական.

ՃՇ.

Հրամայեաց հողմով հոգւոյն, աղքիւրք եւ սահանք խըցեցան, յետ հարիւր և իննառւն աւուրն զազաթունք յերանց բացրւան:

ՃՇ.

Ագռաւն զոր նոյ արձակեաց՝ նըշանակ մեղաց սեւութեան, յարդարըն չէ պարտ լինել, այլ հանել անդարձ գալըստեան:

ՃՇ.

Եւ աւրինակ բանսարկուին, որ յերկնիցն յերկիր վայր անկան, անդարձ եւ անզեղջ գոլով, այլ ի նոյն կացին և ոչ ելան:

ՃՇ.

Աղաւնին առաքելոցն, զպատուիրանըն Տեառն ընկալան, լոցին հաւատով զաշխարհս, եւ առ Տէրն իւրեանց իսկ դարձան:

ՃՇ.

Տերեւ ծիթենոյն է շնորհըն, զոր մարդիկք առնուն յաւազան, որ ըգդրոշմըս զայս ունի, է ժառանկ նա արքայութեան:

ՃՇ.

Տարի մի բոլոր կացին ի տապանն յայն անսխալական, ասէ Տէր Աստուած ընդ նոյ, ել եւ հան ընդ քեզ զամենայն:

ՃՇ. — 2. — ... զոր ինչ, իւ:

ՃՇ. — 2. — այլ, որ, իօ:

ՃՇ. — 1. — ոչ ինչ, թի:

ՃՇ. — 2. — ըզդրումըս, ըզշնորհըս, ին:

ՃՇ. — 2. — իսուն իսուն:

ՃՇ. — 1. — ... բոլորիցին, ի առ-

ՃՇ. — 2. — իսուն, ժի:

ՃՇ. — 2. — հանել, ժի:

պանն անուղղական, իւ:

ՃՇ. 2.

Աւրենեաց ըզնոսա յանել, շնորհելով փոխ համբերութեան,
երդուաւ Տէր Աստուած Նոյի՝ ոչ առնել հեղեղ սուզական:

ՃՇ. 3.

Բոլոր աշխարհիս չածել, մասնաւոր իբրեւ Սոդոմայն,
կամ որպէս փարաւոնանցն, ընկրղմումն որպէս Դադանայն:

ՃՇ. 4.

Հօրոյ բորբոքումն Յակոբ՝ բարկութիւն ի յիսրայէլիան,
ման ի բանչորս հազարին, որ ընդ մովարացին շընացան:

ՃՇ. 5.

Փենսէնէս զԶամբրին եսպան, եւ ապա ման արգիլեցան,
նոյնպէս և Աքայաբ որդովքն հօթանասուն ի սպանդ վարեցան:

ՃՇ. 6.

Ետ հրաման անխիղճ ուտել որպէս ըզբանջար բուսական,
յանասնոց սըրբոց ասէ՝ բայց միայն ի շընչոյ արեան:

ՃՇ. 7.

Որպէս հրեշտակն առ Պետրոս՝ զեն եւ կեր, ոչ պըզծէ զբերան,
զի որ զհեղձուցիկն ուտէ, մարդադէմ ասեմ զնա գազան:

ՃՇ. 8.

Ասաց՝ հան զարիւնն եւ զջունն, որ է հուը եւ աւդ միական,
հողն եւ ջուրն իգի բնութիւն ուտելոյ է պատշաճական:

ՃՇ. 9.

Ասէ Տէր Աստուած ընդ Նոյ, փոխանակ ընդ մարդոյ արեան,
հեղցի եւ արիւն նորա, ճըշմարիտն այս է դատաստան:

ՃՇ. 10.

Մարդն է Աստուծոյ պատկեր՝ անելոյ էառ հըրաման,
վասն այն որ արիւն ենեղն՝ կրրիցէ զպատիժ Կայինայն:

ՃՇ. 11.

Զայս եւ յանբանից խընդրի, յայտ առնէ զօրըն յարութեան,
զի ցուլըն թէ մարդ սպաննէ, գէշ լինի եւ բարկոծի այն:

ՃՇ. 12.

Աղեղան լուծմունք չըգըտայ, թէ այս է թէ այլ կայ նըման,
սա գործ գոլորշի ամպոյ, և արիւու յիրար միանան:

ՃՇ. — 2. — Նոյի, ընդ Նոյի, Ճ. — ընդ ենելին, Ժ. արիւնահեղին, ԸԾ. Կայինայն,
Նոյ, Խ. կայինեան, ԸԾ. Կայինեան, ԸԾ.

ՃՇ. — 2. — ի ԻՎ հազարին, ԸԾ. ի Դ. Հազրին, Ճ. Հազրին, ԸԾ.

ՃՇ. — 2. — լինի, Խ. լիցի, ԸԾ. լիցան, ԸԾ.

ՃՇ. — 2. — զօլուքի, ԹԻ. զօլուքի, ԸԾ. լոգիլի.

ՃՇ. — 2. — վասն որոյ, Խ. արիւն Ժ.

ՃՂԸ.

Մատոյց եւ նոյ պատարագ, եւ եղեւ յոյժ հաճոյական,
նոյ ինքն պատարագ հաճոյ, Աստուծոյ հանգիստ և աւթեփան:

ՃՂԸ.

Եւ նոյ եղեւ հողագործ, որ արուեստ է արդարութեան,
տընկեաց այզի եւ դըրախտ, վայելուչ որդւոց սեպհական:

Մ.

Թէպէտ ջըրհնեղեղն երեկ՝ բայց արմատք ծառոց չգօսացան,
լսեսանէր զդիակ զեռնոցն, եւ զմարդկան ի խառն ընդ զազան:

ՄՍ.

Նըստէր յոյժ անմըխիթար, եւ լինէր սըգով լալական,
լսորհէր ըգկամս Աստուծոյ, եւ զմարդկան թէ յինչ լըրացան:

ՄԹ.

Արար զինի խաղողոյ, զի լիցի սըգոյն սփոփարան,
էարը եւ ի քուն եմուտ, մերկացաւ փոքր ինչ բայց ի տան:

ՄԳ.

Քանան առեալ շիւղ լինէր՝ ընդ երանս հաւուն խաղական,
Քամայ մըտեալ եւ տեսեալ, ծիծաղէր զհայրն աստուածազան:

ՄԵ.

Էնդ որում խօսէր Աստուած եւ սիրէր որպէս բարեկամ,
Նախատէր և արհամարհէր, քամանէր և ասէր բամբասան:

ՄՅ.

Զարթուցեալ ի քնոյ սուրբ հայրն, եւ հոգով գիտաց զամենայն,
ոչ անէծ ըզբամ որդին, յԱստուծոյ զաւրհնելն ընկալան:

ՄԶ.

Սնէծ ըզբանան մանուկն, զլըրբերես մարմնով սատանայն,
ասէր թէ ծառայ լինիս եղբարց քոց մինչեւ յաւիտեան:

ՄԷ.

Յանիծելըն սեւ եղեւ, հայր եթովկացւոցն է Քանան,
ի յազգս են չար եւ քարի, անէծքըն չարեացն է միայն:

ՄՅ.

Եւ այս են որդիքն Յարեթի՝ Կամիր եւ Թիրաս թըրական,
Թորգոմ, Հայկ եւ Արմանեկ, Արամիս հայրն Ամասիայն:

ՄԹ.

Գեղամ եւ Հարմայ, Արամ, որով Հայք Արմէն կոչեցան,
ի նոյէ ի յԱբրահամ, երեքեանն ազգ են մետասան:

ՃՂԸ. — 1. — . . . ընդունական, ժ:

2. — նոյ, նոյն, ժ:

ՄՍ. — 1. — լիներ, նըստէր, թ:

ՄԵ. — 2. — զաւրհնելին, աւրհնելոն, թ:

ՄԵ. — 1. — ելեւ, զարձու, ԶթիՅ:

2. — ընկ անիծանելն սետցաւ, թ:

2. — ի յազգս, ի յազգեն, ժէ:

ՊԱՏՄՈՎԵՐ

ԹԻԼԱՐՂՈՒԽ ՈՃԻՐԸ

1307 Նոյեմբեր 17ին, Անարքարայի Դղեկալին ստորոտը, քսութելի ոճիր մը կատարուեցաւ: Հայոց գաշնակից թաթարներու զօրապետը՝ Պիլարդու, սպաննել տուաւ Հայոց Հեթում Բ. և Լևոն Գ. թագաւորները, Օչին սպարապետը և Պարոն Վասակը, և ուրիշ շատ իշխաններ: Այս սահմակեցուցիչ արարքին շարժառիթը կամ պատճառը կ'արժէ որ քննութեան առնուի և եթէ կարելի է լուսարանուի:

Ինչո՞ւ Պիլարդու սպաննել տուաւ Հայոց թագաւորներն ու իշխանները: Այդ ոճիրը ա) վերին իշխանութեան, այսինքն Դարբանթայ Խանի⁵ հրահանգով, բ) քուն հայ իշխաններու թելագրութեամբ, թէ զ) իր անձնական նախաձեռնութեամբ կատարեց ան: Քննուիք այս երեք պարագաները մի առ մի:

Ա. — Դարբանթայ Խանը համամիտ էր այդ ոճիրն: Ոչ: Վասնզի երբ Ալինախ, և

Հեթումի եղբայրը, զնաց Դավրէժ, մեծ Խանին մօտ բողոքի: Խանը ռեալ կոչել առաջի երեսաց իւրոց զԲիլարդու և հաստատեցաւ նենդութիւնն, զոր արարեալ էր նորա: ասէ Խանն մեծ ցԱլինախ, Տեղանեա, տէր, զթշնամին՝ որ նենգութեամբ դաւանեաց արքայիդ, և աշխարհին, այնպէս որպէս ասացիր, և որ չէր եպել նանութեամբ մերով ո (Դարգել, էջ 25-26): և ստիգից Ալինախը որ իր ձեռքով իսկ սպաննէ զաւաճան Պիլարդուն:

Բ. — Հայ իշխաններ բաժին ունին այդ ոճիրն մէջ: Ժամանակակից պատմիչներ և լիշտառակագիրներ չունին այդպիսի ակնարկութիւն: Չամչեանցն է որ ի՛լու, որ սաստկանալ ատելութեանն, յորդորեալ ումանք յիշխանաց ի զիւէ [!] գնացին առ Պիլարդու իշխանն թաթարաց . . . և շարժեցին զնա չարաչար բանիւթ ի վերալ Լեռնի և Հեթմայ (Պատմութիւն Հայոց, Հասոր Գ., 1786, էջ 311): Չամչեանցի այս ծանրակշիռ հաստատումը պատմական հիմէ զուրկ է, և ծնունդ է կիրքի և մուլեռանդութեան: Իր ձգտումն է կարծի:

ՄԺ.

Եւ ազգըն Քամայ է Քուշ, Մեսրայիմ հայրըն Ներրովթայն, Ներրովթ էր խըրոխտ անյաղթ, եւ հըսկայ որսող վիպական:

ՄԺԱ.

Բար եւ Աներիս, Արքէլ, Նինոս եւ Նինուաս մետասան, սակաւը են սոցա բարին, մինչ եհաս բանըն հայրական:

ՄԺԲ.

Խսկ Սեմ զԱրփաքսաթ ծընաւ, Արփաքսաթ զկախարդ Կայխնեան, սա բախստ ճակտագիր ասաց, եւ եղեւ դիւաց բնակարան:

ՄԺԳ.

Ցորժամ նա սատակեցաւ, իւր որդիրն ի հայրն ի նըման, արարին նըմա պատկեր, եւ սկըսաւ պաշտօն դիւական:

ՄԺԳ.

Նայ էր եղբայր Սալայի, որ ծընաւ զերեր բարեբանն, երեր հայրն երրայեցոց, յաշտարակըն չէր միարան:

(21)

Ն. ԵՊԱ. ՄԱՎԱԿԱՆ

ՄԺ. — 1. — Մեսրայիմ, կի Ներրովթեան, թէ:

2. — Վիպասան, թժ. Վիպայսան, կի:

ՄԺԱ. — 1. — Բար եւ Աներիս Արքէլ, ի. Բար և Անեպիս Արպէլ, թէ:

ՄԺԲ. — 1. — Կայխնեայն, Զժօղ, Կայխն, թժ. Կայխնեայն, կի:

2. — Ճակտագիր, Զթժի:

ՄԺԳ. — 1. — բարեբայն, Զիժի: